ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» նոյեմբերի 2019թ. N --- - Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի հ. 41-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Սեբաստիա փողոցի 18 շենքի հ. 1՝ 75.2քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման հ. 22042013-01-0093 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Կարեն Սամվելի Բաղասյանին, Հարություն Կարենի Բաղասյանին, Սամվել Կարենի Բաղասյանին և Ռուզաննա Կարենի Բաղասյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով առաջարկվում է Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Սեբաստիայի փողոցի հ.18 շենքի հ.1՝ 75.2քմ ընդհանուր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Կարեն Սամվելի Բաղասյանին, Հարություն Կարենի Բաղասյանին, Սամվել Կարենի Բաղասյանին և Ռուզաննա Կարենի Բաղասյանին:

Սեբաստիայի փողոցի հ.18 շենքի հ.1 բնակարանը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման հ.22042013-01-0093 վկայականի, հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Երևանի Շահումյանի շրջանի բնակարանային տնտեսության վարչության պետի 14.06.1991թ. հ.62/21-Մ-96 կարգադրություն-4-ի համաձայն՝ քննարկվող տարածքը տրամադրվել է Կարեն Բաղասյանի մոր՝ Ռուզաննա Մանասյանի բազմանդամ ընտանիքին: Վերջինս 2014 թվականին մահացել է, իսկ Կարեն Բաղասյանը շարունակել է բնակվել քննարկվող բնակարանում /հիմք՝ «Սեբաստիա-2» համատիրության կողմից 16.08.2019թ. և 21.06.2019թ. տրված տեղեկանքներ/: Կարեն Բաղասյանի հետ համատեղ նշված բնակարանում հաշվառված բնակվում են վերջինիս երեք երեխաները /հիմք՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Մալաթիայի անձնագրային բաժանմունքի 28.08.2019թ. հ.22/6-4040 գրություն/: Քննարկվող բնակարանը Կարեն Բաղասյանի կողմից փաստացի տարիներ շարունակ օգտագործում է, այն հիմնովի բարեկարգվել և վերանորոգվել է, սակայն իրավահաստատող փաստաթղթերի բացակայության պատճառով մինչ օրս այն չի սեփականաշնորհվել:

ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի աշխատակազմի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 01.07.2019թ հ. ԱՏ-27/06/2019-2-0108 և 04.07.2019թ. հ. ԱՏ-02/07/2019-2-0306 տեղեկանքների համաձայն՝ Կարեն Սամվելի Բաղասյանի, Հարություն Կարենի Բաղասյանի, Սամվել Կարենի Բաղասյանի և Ռուզաննա Կարենի Բաղասյանի անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում չի իրականացվել, ինչպես նաև վերջին 5 տարվա ընթացքում որևէ անշարժ գույքի ձեռք բերում և օտարում կատարված չէ:

Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի հ.41-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ՝ 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և/կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 25-ի հ.41-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և/կամ/ փաստական հանգամանքները, ուստի անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևանի ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ